ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/11099/02/24 ք. Երևան
9 Հունվարի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/11099/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Ռ Քոնսալթ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն)՝ ի դեմս ներկայացուցիչ Լուսինե Գրիգորյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ ՖՆ)՝ հայցելով ոչ իրավաչափ ճանաչել 07.12.2024թ. ՀՀ ֆինանսների նախարարության «Ռ Քոնսալթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու գործողությունը:

Դատարանը 30.12.2024 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:
Հայցվորը դատարանի որոշումը ստացել է 30.12.2024 թվականին և նույն օրը

կրկին հայցա-դիմումը ներկայացրել է դատարան:
Դատարանն արձանագրում է, որ հայցվորը հայցադիմումը կրկին ներկայացրել է օրենքով սահմանված եռօրյա ժամկետի պահպանմամբ, ինչպես նաև վերացվել է Դատարանի 30.12.2024 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը, միաժամանակ արձանագրում է, որ հայցա-դիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.01.09 12:37:13 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am